

ԽՍՀ ՄԻՌԻԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Յերեկ, հունիսի 11-ին, ԽՍՀ Միութեան Գերագույն Դատարանի դահլիճում, ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Հատուկ դատական ատյանը հետևյալ կազմով՝ նախագահող ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլլեգիայի նախագահ, բանակի զինվորական իրավաբան ընկեր Վ. Վ. Ուրբիև և Առյուծի անդամներ՝ ԽՍՀՄ-ի պաշտպանության ժողովրդի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ողջակիս ուժերի պետ, բանակի յերկրորդ կարգի հրամանատար ընկեր ՅԱ. Ի. Ավետիսյան, Խորհրդային Միության մարշալ ընկեր Ս. Մ. Բոկոբովսկի, Խորհրդային Միության մարշալ ընկեր Վ. Կ. Բլաշկին, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի գլխավոր շտաբի պետ, բանակի առաջին կարգի հրամանատար ընկեր Բ. Մ. Շուրմոսյան, Բելոռուսիայի զինվորական շրջանի զորքերի հրամանատար, բանակի առաջին կարգի հրամանատար ընկեր Ի. Պ. Բեռնով, Լենինգրադի զինվորական շրջանի զորքերի հրամանատար, բանակի յերկրորդ կարգի հրամանատար ընկեր Պ. ՅՅ. Դիմիտրև, Հյուսիսային Կովկասի զինվորական շրջանի զորքերի հրամանատար, բանակի յերկրորդ կարգի հրամանատար ընկեր Ն. Դ. Կաշիրև և ընկեր Ստալինի անվան կազակային ճակատի կորպուսի հրամանատար, զինվորական հրամանատար ընկեր ՅՅ. Ի. Գոլոմոսով, ղեկավար դատական նիստում, 1934 թվի դեկտեմբերի 1-ի որոշումով սահմանված կարգով, քննեց Մ. Ն. Տուխաչևսկու, Ի. Ե. Յակիրի, Ի. Պ. Ուրբովի, Ա. Ի. Կորկի, Ռ. Պ. Նյդեմանի, Բ. Մ. Ֆելդմանի, Վ. Մ. Պրիմակովի, Վ. Կ. Պուտուլի գործը՝ ՌՍՖՍՀ Քրեական Որենսգրքի 58—1 բ, 58—8 և 58—11 հոդվածներով նախատեսված հանցագործությունների մեղադրանքով։

Մեղադրական յեղրակացության հրապարակումից հետո նախագահող

ընկեր Ուրբիևի ախ հարցին, թե մեղադրյալներն իրենց մեղավոր ճանաչում են նրանց առաջադրված մեղադրանքների մեջ, բոլոր մեղադրյալներն իրենց լիովին մեղավոր ճանաչեցին վերև ժառանգված հանցագործությունների մեջ։

Դատարանը հաստատեց, վոր վերահայտարարված մեղադրյալները ծառայելով մի ոտարերկրյա պետության ռազմական հետախուզությանը, պետություն, վորք վորք բարեկամական քաղաքականություն ե վարում ԽՍՀ Միության վերաբերմամբ, այդ պետության զինվորական շրջանների սխտեմատիկարար լրտեսական տեղեկություններ եյին հաղորդում, վրնասարաքական ակտեր եյին կատարում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի զորությունը ջլատելու նպատակով, Կարմիր Բանակի պարտություն եյին պատրաստում՝ ԽՍՀ Միության դեմ ռազմական հարձակում գործելու դեպքում և իրենց նրպատակ եյին դրել ոժանդակելու Խորհրդային Միության անդամահատմանը և ԽՍՀՄ-ում կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության վերականգնմանը։

ԽՍՀ Միության Գերագույն դատարանի Հատուկ դատական ատյանը բոլոր մեղադրյալներին— Մ. Ն. Տուխաչևսկու, Ի. Ե. Յակիրի, Ի. Պ. Ուրբովի, Ա. Ի. Կորկի, Ռ. Պ. Նյդեմանի, Բ. Մ. Ֆելդմանի, Վ. Մ. Պրիմակովի և Վ. Կ. Պուտուլային մեղավոր ճանաչեց զինվորական պարտը (յերդումը) խախտելու, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակին դավաճանելու, հայրենիքին դավաճանելու մեջ և ՎՈՐՈՇԵՑ, — բոլոր մեղադրյալներին գրելի զինվորական կոչումից, մեղադրյալ Տուխաչևսկուին՝ Խորհրդային Միության մարշալի կոչումից և բոլորին դատապարտել քրեական պատժի դերագույն չափին— զնդակահարության։